

ՄԻՏՔԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԻՒՆ

Պօղոս Առաքեալ կը խօսի փակուած միտֆերու մասին (Բ. Կր. 3.14-15), ապականած միտֆերու մասին (Ա. Տիմ. 6.5), բքացած միտֆերու մասին (Բ. Ժտ. 1.9), աշխարհիփ գիտութիւններով գրաւուող միտֆերու մասին (Կղ. 2.8), մարմնականին կառչած միտֆերու մասին (Հո. 8.7), խաւարած միտֆերու մասին (Եփ. 4.18):

Նման միտփ մը «Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ» (Հո. 8.7): Բայց, որպէսզի բարեկամ ըլլայ Աստուծոյ ու կարենայ հնազանդիլ անոր խօսքին ու կամփին, պէտք է աղօթէ, որ Աստուած նորոգէ ու նոր մարդ դարձնէ զինք (Հո. 12.2), լուսաւորէ զինք (Եփ. 1.18), եւ իր մէջ դրոշմէ իր օրէնքները (Եբր. 8.10, 10.16): Երբ Աստուած իր Սուրբ Հոգիին ու սուրբ խօսքին միջոցաւ բանայ ու նորոգէ մեր միտֆերը, այն ատեն միայն զինք պիտի ֆանչնանք ճշմարտապէս (Ա. Յե. 5.20), եւ այն ատեն միայն անգրաղ միտֆով Տիրոջ հնազանդութեան պիտի նուիրուինք (Ա. Կր. 7.35): Արդարեւ, նորոգուած միտֆը պատրաստ եւ արթուն եղող միտֆն է, որ իր ամբողջ յոյսը կապած կ'ըլլայ փրկութեան (Ա. Պտ. 1.13): Նորոգուած միտֆը Աստուծոյ կամքը գիտցող ու կատարող միտֆն է, Փրկչին սիրոյն մասին խոկալով հրնուացող միտֆն է, իր հայեացքը մնայուն կերպով երկինք սեւեռող միտֆն է, ճշմարտութիւնը սիրող ու ստուքներէն գարշող միտֆն է: Նորոգուած միտֆը Աստուծոյ համար ընդունելի ու կատարեալը ֆանչցող եւ լաւն ու բարին հետապնդող միտֆն է (Հո. 12.2):

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ ՀԱՒԱՏԱՅԵԱԼՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ



Ինչպէս, որ աղօթքը կը սրբէ մեզ եւ կը մօտեցնէ Աստուծոյ, այնպէս ալ երբ մենք հաղորդուինք Փրկչի մարմինին եւ արիւնին, կը սրբուինք եւ կը նմանինք Անոր, որ մարդիկը փրկելու համար մեղքի ապականութենէն, խաչին վրայ թափեց իր մաքուր արիւնը: Եւ կը զգուշանանք մեղքերէ մտածելով, որ մեղքը կը խափանէ մեր հաղորդութիւնը Սուրբին եւ Սրբութեան հետ: Գրիգոր Տաթեւացին կ'ըսէ. «Այս խորհուրդին գործն է աւելցնել Շնորհքը եւ դեղ ըլլալ ամենօրեայ մեղքերու» (Գիրք Հարցմանց, էջ 594): Այս է պատճառը, որ Քրիստոսի չարչարանքները պիտի յիշենք հաղորդուելով:

Իսկ Յովհաննէս Մանդակունի հայրապետը կ'ըսէ. «Անոնք, որ հաւատֆով ե՞՞՞ երկիւղածութեամբ կը մօտեան քրիստոսին, կը լուսաւորուին Սուրբ Հոգիով եւ օրէ օր առաքինի գործերով վեր կը բարձրանան»:

ՃՐԱԳ ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ քերք ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քնյ. Սարգիսեան



ՔՈՒ ԽՍՔԵՐ ԽՄ ՌՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 20 ՕԳՈՍՏՈՍ 2023 ԹԻՒ 34

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Առ. 11.30-12.4: Չք. 2.10-13: Բ. Կր. 6.16-7.1: Ղկ. 1.39-56

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 1.39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Չաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեալ ես դուն եւ օրհնեալ է զաւակը, որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինձի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխասս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ք թեզի, որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ թեզի ըսուածները պիտի կատարուին»:

Մարիամ ըսաւ. «Տէրը պիտի գովարանեն: Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոյ, իմ Փրկչոյս, որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը: Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի, քանի հզօրն Աստուած ինձի համար մեծամեծ գործեր կատարեց: Սուրբ է անունը անոր: Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի աստուածավախ մարդոց վրայ: Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ, ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով: Գահազրկեց արքաները եւ բարձրացուց խոնարհները: Անօթիները բարիքներով լիացուց, մինչ հարուստները դատարկածեռն արձակեց: Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի, հաւատարիմ մնալով իր ողորմութեան, ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝ Աբրահամի եւ անոր զաւակներուն:

Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

ՈՐՂԻ

Որդին, թէ՛ Աստուած է եւ թէ՛ մարդ: Ինչպէս հաւատամքին մէջ կ'ըսենք, իբրեւ միածին, ծնախ նոյնինքն Հօր Աստուծոյ էութենէն, ասիկա կը նշանակէ, թէ կատարեալ Աստուած է Որդին, քանի որ Աստուծոյ էութենէն կամ բնութենէն կը ծնի: Այս է պատճառը, որ Որդին կը կոչուի նաեւ ԼՈՅՍ, քանի որ Աստուած Լոյս է, եւ այսպէս՝ Աստուծոյ բոլոր ստորագելիները Որդւոյն ալ ստորագելիներն են:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ա. ՅՈՎԱԿԻՄԻ ԵՒ ԱՆՆԱՅԻ

Յովակիմ եւ Աննա, պանծալի եւ գովելի, մարդացեալ հրեշտակներ են եւ պարծանք մաղկային ազգին: Անոնք Աստուծոյ կողմէ ընտրուեցան ծնողքը ըլլալու Աստուածորդիին ծնողքին, եւ իրական նախահայրը եւ նախամայրը տիեզերքի Փրկիչին:

Աստուած ուզեց, որ նախ Յովակիմ եւ Աննա անգաւակ մնան, որպէսզի ծերութեան եւ ամուսնեան մէջ հրաշագործէ անոնց հրաշալի գաւակ մը՝ սահմանուած իր Միածինը ծնելու:

Յովակիմ եւ Աննա բարեպաշտ, հաւատացեալ եւ միշտ Աստուծոյ ապաւինելով կ'աղօթէին: Օր մը աղօթքի առեւն Աստուծոյ հրեշտակը երեւցաւ Աննային եւ ըսաւ. «Աննա՛, Աննա՛, Աստուած լսեց քու աղօթքդ, եւ ահա պիտի յղանաս եւ պիտի ծնանիս մանուկ մը, եւ անոր անունը պիտի տարածուի համայն երկրի վրայ»:

Աննա ըսաւ. «Կենդանի է իմ Տէր Աստուածս: Եթէ գաւակ մը ծնանիմ, գայն Աստուծոյ պիտի ընծայեմ Սամուելի մօր՝ Աննայի նման եւ իմ գաւակս ալ Աստուծոյ տաճարին պաշտօնեայ պիտի ըլլայ իր կեանքի բոլոր օրերուն»:

Աստուծոյ հրեշտակը անոր ամուսինին քով ալ իջաւ եւ ըսաւ անոր. «Յովակիմ, Աստուած լսեց քու աղօթքդ: Գնա՛ տունդ: Քու կինդ Աննա պիտի յղանայ, եւ ձեզի եւ ամբողջ երկրին ցնծութիւն պիտի ըլլայ»:

Երբ լրացան օրերը, շնորհանունն Աննա ծնաւ իր մանուկը՝ շնորհալի դուստրը եւ անունը կոչեց Մարիամ, որ կը նշանակէ բարձրութիւն, տիրութիւն, լուսապայծառ, աստղ ծովու, եւ այլն, որոնք լաւ կը յարմարին մեր տիրամօր:

Երբ մանուկը երեք տարեկան եղաւ, Յովակիմ եւ Աննա առին Մարիամը եւ տարին Տիրոջ տաճարը եւ ընծայեցին Աստուծոյ՝ ըստ իրենց ուխտին եւ դրին զինքն Աստուծոյ պաշտամունքին մէջ՝ ուրիշ կուսաններու հետ, որոնք կը բնակէին տաճարի կուսաստանին մէջ ըստ աւանդութեան, Մանուէլի դուստրին՝ Աննա մարգարէի դաստիարակութեան տակ:

Բայց, քանի որ կոյսին տարիքը բաւարար չէր ուրիշներու հետ բնակելու համար, քահանայապետը ծնողքին ըսաւ, որ տանին տունը եւ անբժութեամբ պահեն, եւ երբ եօթը տարեկան ըլլայ՝ բերեն եւ դնեն նոյն կուսանոցին մէջ: Եւ այնպէս ըրին:

Այնուհետեւ Մարիամ որպէս հողեղէն Սերովբէ, եօթը տարի եւս ապրեցաւ կուսաններուն հետ եւ ապա, ըստ Աստուծոյ տնօրինութեան նշանուեցաւ Յովսէփ արդարի հետ եւ տասնհինգ տարեկանին ծնաւ անարատ կուսութեամբ աշխարհի Փրկիչը, Յիսուս՝ որդի Աստուծոյ:

Իսկ Աստուածածինի ծնողքը՝ Յովակիմ եւ Աննա, խոր ծերութեան մէջ կանչուեցան առ Աստուած:

Սովորական կարծիքը այն է, թէ Յովակիմ Աննայէն առաջ վախճանեցաւ, եւ Աննա արժանի եղաւ տեսնելու թողը՝ Յիսուս Քրիստոսը Աստուածորդին՝ մարմնապէս, եւ Փրկիչի մանկութեան օրերուն վախճանեցաւ եւ թաղուեցաւ իր ամուսինին գերեզմանը՝ Գեթսեմանիի ձորին մէջ:

Յովակիմ եւ Աննա յատուկ տօն ունին, որ այս տարի կը գուգադիպի Երեւելաբքի, 22 Օգոստոսին:

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԹՎԱՎՐԳ ԼԱՐՈՂՆԵՐԸ ԲՈՆՈՒԵՅՈՒՆ ԹՎԱՎՐԳԻՆ ՄԷՋ

Մեծէն պատիկ բոլորն ալ մէկ առ մէկ հեռացան: Քանի մը հաստատումներ եւս: Առաջին, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները Յիսուսին եւ Յիսուսի շուրջ հաւաքուած ժողովուրդին կ'ուզէին ցոյց տալ, թէ իրենք անմեղ էին եւ հակառակ մեղքին, բայց Յիսուսի խօսքը՝ «Զեր մեջէն անմեղը թող ինք առաջին քարը նետէ անոր վրայ, հրապարակեց անոնց մեղքերն ու մեղաւորութիւնը ամէնուն դիմաց եւ խայտառակ ըրաւ զանոնք: Երկրորդ, եթէ կինը օրէնքը կտորած էր շնութիւն ըրած ըլլալուն համար, ապա Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները իրենք եւս Օրէնքը կտորեցին՝ քանի չկրցան զայն քարկոծել: Իբրեւ Օրէնքի պաշտպաններ եկան՝ իբրեւ Օրէնքը կտորողներ փախան: Երրորդ, եկան Տէրը ծուղակի մէջ ձգելու՝ իրենք ինկան իրենց լարած ծուղակին մէջ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Դատապարտելու եկած անձերը՝ դատապարտուած մեկնեցան: Ուստի, զգուշանանք ուրիշները դատապարտելէ, որպէսզի չդատապարտուինք:

ՏԵՐ ԶՕՐԱՅՈՒՐ ՄԵՋ ՄԵՐ ՀԱՄԱՏԻՆ ՄԷՋ

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԷ ՄԵՂՔԵՐԷՂ ՍՐԲՈՒԵԼՈՒ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ ՈՐՆԻՍ ԿԱՐԳԱՎ՝ ՍԱՂՄՈՍ 25

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որովհետեւ ինք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ, ովկիանոսներուն վրայ հաստատեց զայն: Ո՛վ արժանի է Տիրոջ լեռը ելլելու, ո՛վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ կանգնիլ: Ան՝ որ մաքուր է իր գործերով ու մտածումներով, ան՝ որ ստութեան անձնատուր չեղաւ, եւ նենգութեամբ երդում չըրաւ: Այնպիսին Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն: Այսպէ՛ս կ'ըլլայ աստուածապաշտը, որ կ'ուզէ քու ներկայութեանդ գայ, ո՛վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՛վ է այս փառաւոր Թագաւորը: - Տէ՛րն է, հզօր եւ անպարտելի, Տէ՛րը, պատերազմի մէջ անխորտակելի: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՛վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՛վ է այս փառաւոր Թագաւորը: - Ամենակալ Տէ՛րը, ի՛նքն է փառաւոր Թագաւորը:

Միասնաբար աղօթենք կարդալով Սաղմոսագիրքը: